



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**  
**ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.....” ..... 2020թ.

N.....

«ԳԱՄՄԱ ՌԵՍՈՒՐՍ» ՍՊԸ-ի  
 տնօրեն Վ.Հովհաննիսյանին  
 Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ.Ջրառատ,  
 Արտադրական օբյեկտ

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

(Վարչական վարույթ հարուցելու և լուսմներ իրականացնելու մասին)

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 35-րդ հոդվածով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1716-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ «ԳԱՄՄԱ ՌԵՍՈՒՐՍ» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով:

Սույնով Դուք տեղեկացվում եք, որ վարչական լուսմները տեղի կունենան 2020 թվականի դեկտեմբերի 09-ին՝ ժամը 12:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում (հասցե՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ):

Վարչական վարույթին կարող եք մասնակցել ինքնուրույն կամ Ձեր ներկայացուցչի միջոցով: Խնդրում ենք վարչական վարույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և (կամ) լիազորագրով: Պատշաճ ծանուցված մասնակցի չներկայանալը արգելք չէ վարչական վարույթի իրականացման համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը:

Կից ներկայացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1716-Ա հրամանը – 2 թերթ:

X

---

Հարգանքով՝

Լ. Շուշանյան

Կատարող՝ Լիլիթ Փաշայան, Իրավաբանական վարչություն  
Հեռախոս՝ 010 515 171